Հաստատված է
30.08.2022 թ. մանկխորհրդի
N.1 նիստով

Տնօրեն՝——————Ա.Մուրադյան

Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N.4 հիմնական
դպրոցի տղաների դասական երգչախմբի 2022-2023
ուստարվա աշխատանքային պլան

Խմբակի ղեկավար՝Հասմիկ Ասլանյան

Նպատակը՝

- առաջին հերթին ունենալ ոգով հարուստ, հայրենասեր և բազմակողմանի զարգացած սերունդ: Երեխայի մեջ սերմանել սեր երաժշտության հանդեպ՝ հիմք ընդունելով առաջին հերթին ազգային երաժշտության անգին գոհարների հետ ծանոթացումը, ինչպես նաև դասական երաժշտության լավագույն ստեղծագործությունների ուսուցանումը , որը դրական ազդեցություն կթողնի երեխայի ճաշակի ձևավորման վրա:
- այս տարվա ուսումնական պլանը կազմելիս առաջին հերթին նպատակադրվել եմ երգչախմբի երգեցողության որակը էլ ավելի բարձր նշաձողի հասցնել ,կատարելով տարաբնույթ ձայնավարժություններ, ճիշտ շնչառությանը ուղղված վարժություններ, որի արդյունքում երեխաների կարողությունները արդեն թույլ կտա ծրագրի մեջ ընդգրկել բազմաձայն ստեղծագործություններ:
- ուսումնական տարվա կտրվածքով նախատեսվում է սովորել տասը բազմաբնույթ երգ, որոնք նախապես ընտրվել են՝ հաշվի առնելով դպրոցում իրականացվող միջոցառումները ՝ ամանորյա երգեր, հայրենասիրական երգեր,կատակերգեր, ժողովրդական երգեր և այլն:

- ուսումնական տարվա սկզբում երգչախմբի կազմը համալրելու նպատակով կհայտարարվի ընդունելություն: Լսումները կանցկացվեն առաջին դասարաններում, որի արդյունքում կընտրվեն այն տղաները, ովքեր աչքի կընկնեն երաժշտական ընդունակություններով՝ լսողություն, ռիթմի զգացողություն և հիշողություն: Ցանկալի է, որ երգչախմբի կազմը բաղկացած լինի զոնե՝երեսուն հոգուց՝ գեղեցիկ, որակյալ և հնչեղ երգեցողություն ստանալու նպատակով :
- ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է կազմակերպել երկու միջոցառում՝ ամանորյա և տարեվերջի հաշվետու համերգ, ինչպես նաև նախորդ տարիների սովորության համաձայն, փորձի փոխանակման նպատակով կկազմակերպվի որևէ դպրոցի երգչախմբի հետ փոխադարձ համերգային այցելություն , որը շատ լավ արդյունք է տալիս երգչախմբին:
- ուսումնական տարվա վերջում նախատեսվում է նաև կազմակերպել մենահամերգ որևէ թանգարանում՝ դպրոցից դուրս ճանաչողական և փորձարարական համատեղ արդյունքի համար:

2022-2023 ուս.տարի

Շաբաթական՝ 4 ժամ, տարեկան՝ 136 ժամ

	Ուսուցանվող երգերը	Ժամերի քանակը	Նպատակը, խնդիրները, վերջնարդյունքները
1	Երաժշտություն՝Կոմիտաս <<Հայր մեր>> աղոթք մանուկների համար Դաշնակումը՝ Մ.ՍԱՄՎԵԼՅԱՆ	13	1. Ծանոթացնել երեխաներին Կոմիտաս Վարդապետի և Կոմիտաս երաժշտի հետ: Բացատրել նրա դերի կարևորությունը հայ երաժշտության զարգացման մեջ: 2. Սովորել երգի բառերը 3. Երգը միաձայն է և պահանջում է երգել շատ մեղմ ,իրար լսելով 4. սովորել երգել՝ հիմնվելով շղթայակապ շնչառության վրա 5. Կկարողանան իրար լսելով և աղոթական կատարել երգը
2	<<Ճանճը կարագում>> Երաժշտություն՝ Ռ.Պետրոսյան Խոսք՝Յու.Սահակյանի	14	1. Սովորել երգի բառերը 2. Սկզբում սովորեցնել առանձին ձայնաբաժիններով 3. Երկու ձայնաբաժինները միացնել 4. Ռիթմի զգացողությունը երեխաների մոտ զարգացնելու նպատակով երգը կատարել հարվածային գործիքի ուղեկցությամբ՝ ընտրելով առավել ռիթմի զգացողությամբ աչքի ընկնող տղայի 5. Երեխաներրը ձեռք կբերեն երկձայն երգեցողության փորձ
3	Bruno Coulais <<Vois sur ton chemin>>	13	1. Քանի որ երգը ֆրանսերեն է ,նպատակահարմար է ավելի երկար ժամանակ տրամադրել բառերի ճիշտ արտաբերմանը ու յուրացմանը և անպայման թարգմանել երգը՝ բացատրելով երգի իմաստը: 2. Սկզբում սովորոցնել երգը առանձին ձայնաբաժիններով՝

			սոպրանո և ալտ 3. Երգը կատարել երկձայն այն դեպքում , Երբ ձայնաբաժինները առանձին-առանձին կկարողանան շատ լավ և մաքուր կատարել իրենց թեմաները 4. Երեխաները կհաղորդակցվեն օտար լեզվի հետ և կամրացնեն իրենց երկձայն երգեցողության ունակությունները:
4	<<Զոն գրքին>> Երաժշտություն՝Գ.Չթչյան Խոսք՝Ս.Մուրադյանի	15	1. Սովորել երգի բառերը 2. Քանի որ սոպրանոների ձայնաբաժինը գրված է բարձր ձայնասահմանում,անհրաժեշտ է շատ ձայնավարժություններ կատարել: 3. Ցանկալի արդյունքի չհասնելու դեպքում պետք է փոխել երգի տոնայնությունը: 4. Սկզբում սովորոցնել երգը առանձին ձայնաբաժիններով՝ սոպրանո և ալտ 5. Երգը կատարել երկձայն այն դեպքում , Երբ ձայնաբաժինները առանձին-առանձին կկարողանան շատ լավ և մաքուր կատարել իրենց թեմաները 6. Երգի վերջում առկա է մոդուլյացիա, որից առաջացած դժվարությունները հաղթահարելու նպատակով կպահանջվի երկարատև աշխատանք 7. Կհաղթահարվի երգում առկա տոնայնական փոփոխությունը ինտոնացիոն ճիշտ կատարելու դժվարությունը

5	Երաժշտություն՝ Մ. Մավիսակալյան <<Երկիր հայրենի>> Խոսք՝ Ն. Միքայելյանի	13	1. Սովորել երգի բառերը 2. Սկզբում սովորոցնել երգը առանձին ձայնաբաժիններով՝ սոպրանո և ալտ 3. Երգը կատարել երկձայն այն դեպքում , Երբ ձայնաբաժինները առանձին-առանձին կկարողանան շատ լավ և մաքուր կատարել իրենց թեմաները 4. Երգը ունի ռիթմիկ բարդություն՝սինկոպա ,որի վրա մեծ ուշադրություն պետք է դարձնել ։ 5. Հայրենիքին նվիրված երգերը մեծ և կարևոր տեղ են զբաղեցնում մեր երկացանկում, նպատակ ունենալով սերմանել երեխաների մեջ հայրենասիրություն և ձևավորել ամուր ազգային ոգի։
6	<<Էջմիածին>> Խոսք և երաժշտություն՝ Մ. Սամվելյ ան	13	1. Սովորել երգի բառերը 2. Երգը միաձայն է, բայց ունի ինտոնացիոն բարդություններ՝դիեզներ ,բեմոլներ և մեղեդային գիծը պետք է կարողանան կատարել շատ մաքուր 3. Նպատակահարմար կլինի դժվարություն ստեղծող մասերի վրա առանձին պարապել ,երեխաների ձայնը չհոգնացնելու համար 4. Երգի ուսուցումը էլ ավելի մեծ սեր կարթնացնի երեխաների մեջ իրենց սիրելի ծննդավայր՝ Էջմիածնի հանդեպ։

7	<<Նոր տարի>> Երաժշտություն՝ Վ. Մանուկյան Խոսք՝Հ. Հովեյանի	14	1. Սովորել երգի բառերը 2. Երգը գրված է եռաձայն շարադրանքով ,բայց քանի որ երգչախումբը չունի եռաձայն երգեցողության հմտություններ ,կկատարեն այն երկու ձայնաբաժնով։ 3. Սկզբում սովորոցնել երգը առանձին ձայնաբաժիններով ՝ սոպրանո և ալտ 4. Երգը կատարել երկձայն այն դեպքում , Երբ ձայնաբաժինները առանձին-առանձին կկարողանան շատ լավ և մաքուր կատարել իրենց թեմաները 5. Կկարողանան մասնակցել Նոր Տարվան նվիրված միջոցառմանը այս երգով
8	Դպրոցի հիմնը երաժշտություն՝ Հ. Ասլանյան Խոսք՝Ա. Մկրտչյան	13	1. Սովորել երգի բառերը 2. Սովորել առանձին ձայները։Երգը ունի միջին բարդության բազմաձայնություն միայն կրկներգում ,հարց ու պատասխանի տեսքով 3. Հաղթահարել երգում առկա ինտոնացիոն բարդությունը ,որը ստեղծել է մոդուլյացիան 4. Երեխաները սիրով կկատարեն իրենց սիրելի դպրոցին նվիրված հիմնը հաշվետու համերգի ժամանակ

9	<<Հրաժեշտ դպրոցին>> Երաժշտություն՝Ա.Սաթյան Խոսք՝Ն.Թադևոսյանի	14	1. Սովորել երգի բառերը 2. Երգը գրված է եռաձայն շարադրանքով ,բայց քանի որ երգչախումբը չունի եռաձայն երգեցողության հմտություններ ,կկատարեն այն երկու ձայնաբաժնով։ 3. Սկզբում կսովորեն երգը առանձին ձայնաբաժիններով՝ սոպրանո և ալտ 4. Երգը կկատարեն երկձայն այն դեպքում , Երբ ձայնաբաժինները առանձին-առանձին կկարողանան շատ լավ և մաքուր կատարել իրենց թեմաները 5. Հաշվետու համերգի ժամանակ այս երգը շատ գեղեցիկ նվեր կլինի շրջանավարտների համար
10	<<Ծափ տուր ինձ հետ>> խոսք և Երաժշտություն՝Ջ.Գերշվին	14	1. Քանի որ երգը անգլերեն է՝ ապա կպահանջվի երկար և մանրակրկիտ աշխատանք կատարել երգելու ընթացքում բառերի ճիշտ արտաբերմանը վրա 2. Երգը միաձայն է ,բայց ունի ռիթմիկ դժվարություններ՝ կետագծային ռիթմ,որը կպահանջի երկար աշխատանք կատարել որպեսզի երգչախումբը կարողանա հավասար երգել և ճիշտ արտաբերել բառերը 3. Երգը ավելի գեղեցկացնելու նպատակով երգչախումբը այն կկատարի ծափերի ուղեկցությամբ 4. Այս երգը կզարգացնի երեխաների մեջ ռիթմի զգացողությունը